

ԱՐՄԵՆՈՒԹԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 Fifth Avenue, New York, N. Y.

8

Telephone: CHELSEA 3-1791

Դ Բայր  
Ռետր գ. 1938 օյցոց  
Հայոց ժողովածութեան  
Ըստական պահպանի համար

Ազժանապատիւ հովիւ եւ  
Պատուարժան հոգաբարձութիւն  
Պինկհէմթընի թեմին

Մեր Ուխտ Փուլմընի թեմի Պատ. Հոգաբարձ-  
չութիւնը Յախանձագին կը հայէ կեղ. Վարչութենէն որ  
իրեն անմիջական դրամական օգնութիւն մը հասցնէ, որպէսզի  
անդւոյն եկեղեցին հայառակորդներու ձեռքը չ' իշխայ:

Ինչպէս յայտնի է, միեւնոյն եկեղեցին դատի  
տակ էր եւ վճիռը ի նպաստ մեզի տրուած: Այժմ վերաբննու-  
թեան դիմուած է Հակառակորդ տարրին կողմէ, որով մերին-  
ներն ա: պարտաւորուած են վերստին շարունակելու դատա-  
վարութիւնը, որուն հետեւանօք 300 տոլարի ծախս մը կայ:  
Եւ ոչ մէկ մէջ Հայթայթելու սոյն գումարը:

Կեղ. Վարչութիւնը մատնուած արդէն նեղ կա-  
ցութեան մը, որոշած է դիմել մեր բոլոր թեմերու Պատ.  
Հոգաբարձութեանց եւ խնդրել որ բարեհաճին ՍՏԻՊՈՂԱԲԱՐ  
յանուն այդ նպատակին փութացնել: իրեն միայն 10ական տո-  
լար, որպէսզի կարող ըլլայ տրամադրել եւ դիմագրաւել:  
շեշտուած կարիքը եւ չ'թողուլ որ շահուած դատ մը կոր-  
սըուի վայրապարի:

Կեղ. Վարչութիւնը Ազգային արժանապատուու-  
թեան Հարց մը կը նկատէ ասիկս եւ կ'ակնկալէ որ իր պար-  
տաճանաչ թեմերը սատար Հանդիսանան իրեն, արժանավայել  
նախանձախնդրութեամբ մը, որպէսզի շահուած դատ մը չի  
վտանգուի եւ անքաղձալիներ չհասնին իրենց իլուրդային  
մուրազին:

Ողջունիւ սիրոյ

*Տառած. Կ. Ջ. Ջ. Ջանձարյան*

Առաջնորդական Փոխանորդ



ԱՐԵՎԱՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ

PRELACY OF THE ARMENIAN CHURCH  
OF AMERICA

156 5th Avenue, New York, N. Y.  
Room 1012

Հայոց Պարք Հայ Պատրիարքութեան  
Խորհրդական Պատրիարքութեան  
Հայոց Առաջնորդութեան Ազգային Խորհրդական

No. ....

Telephone CHelsea 3-1791

ԱՅԻՉՈՉԱԿԱՆ

20 Տեսեալոր 1932

Արքանապահի Հոգենոր Հայու

Պատրիարքան Հոգաքարձութեան  
Հայոց Առաջնորդութեան Ազգային Խորհրդական

ՀԱՅՈՎՀԱՅՐԴ

Համեցէց Անքանիկեալ Հարցարաններու պատասխանները նշանակել եւ գու-  
թագութեան մեջ

Խոյնուս Առաջնորդական Հոգենոր անքանական է ունենալ նոր Թուրք Հայ  
Պարզներու ննամակալութեանց և Եկեղեցւու Ֆրկնանց Միավորանի Հայոցները ։

Վայուս հայ ու այս ամիսողական յանձնաբարութիւննց արժանի կարեւորու-  
թեանը Ականի կանելու եւ որքան կարելի է շատով պատասխանները կը հաղորդե մեջ

Հայուսկան օքնութեանը

ԱՐԵՎԱՆՈՐԴԱՐԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ

PRELACY OF THE ARMENIAN CHURCH  
OF AMERICA

156 5th Avenue, New York, N. Y.  
Room 1012

Հ. Բայրի Երեցութեան մէջը 2  
Վայուարժան Հայոցարձութիւն  
Հայ Առաքելական Եկեղեցւոյ  
21. թւն:

No.....

Telephone CHELSEA 3-1791

25 Տունիս 1932

Արքանարքական Հոգիւոր Հովհաննես  
Պատուարժան Հայոցարձութիւն  
Հայ Առաքելական Եկեղեցւոյ  
\*\*\*\*\* / Պայքչութեան .

Առաջնորդական Վիճակիս Ազգ. Երեսփոխական Ժողովը պիտի զաւմարուի յա-  
ռաջիկայ Նոյեմբեր 12 և 13. նարդ և հիրակի օրերը:

Ուրախ եմ որ 2եր թիւն ոչ իր օրինական կազմը լրիւ սահման ընդունված։  
Իրաւունք ունի Ազգ. Գերագոյն Ժողովի մէջ իր Երեսփոխան ունենալու ժամանեց-  
ւու համար Ժողովի աշխատութեանց։

Աւոտի, Հանեցէ Ազգ. Սահմանադրութեան Միական Կանոնադրի 3 և 4. ին  
Թիմական Կանոնադրի 13, 14, և 15-րդ, յօդուաներու արամադրութեանց Համաձայն  
Անզամական Ժողովի Միջոցաւ կատարել ու 2եր Երեսփոխանի ընդունութիւնը և ըն-  
դունական սեղեկադիրն ու Գուրքան յանձն Առաջնորդարան։

Այս առիր կը յանձնարարենք մէս Ժողովութիւն գարնել օրէնքի սկզբէրի  
գործադրութեան, որպէսզի անսայ թերացուցներով 2եր թիւնը չպրկուի Ազգ. Երեսփո-  
խական Ժողովի մէջ Հայն ունենալու։

Հայրական օրէնքութեանը  
Հայուց Ըստ Հայութեան

Առաջնորդ Հայոց Առաքելական

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ

PRELACY OF THE ARMENIAN CHURCH  
OF AMERICA

156 5th Avenue, New York, N. Y.  
Room 1007 - 1008

ի Բառով /այսպէս աս ընդ/- Թեմ  
օրինակ /այսպէս աս ընդ/- Թեմ

No. ....

Telephone CHelsea 3-1791

11 Հոկտեմբեր 1932

Պատուարժան Հոգաբարձութիւն  
Հայ Առաքելական Եկեղեցւոյ  
Ի Պինկէ Էմթըն.

Հոկտեմբեր 9-թուակիր Զեր նամակէն գոհունակութեամբ կը տեղեկանանց  
որ Անդամական Ժողովի Կողմէ կատարուած է թեմիդ Ազգային Երեսփոխանի ընտրութիւնը,  
յանձին Տիար Սահակ Գրանեանի:

Խնչպէս գիտէք նորընտիր Երեսփոխաններու վաւերացումը կը կատարուի ուզ-  
ղակի Երեսփոխանական Ժողովի Կողմէ, յետ ընտրական տեղեկագրի քննութեանը

Զեր նամակը տեղեկագրի հանգամանքը չլրացնէր մէկ քանի հիմնական կէտեր  
նշանակուած շըլլալով:

• Ուստի կը յանձնարարենք որ հաճիք յետագայ գլխաւոր մասերը ամբողջաց-  
նելով, իբր տեղեկագրի, նոր նամակ մը գրէք մեզ:

Ա. - Ընտրութեան ժամանակը եւ տեղը .

Բ. - Եկեղեցւոյ տրատու անդամոց թիւը.

Գ. - Ընտրութեան մասնակցող անդամներու թիւը.

Դ. - Քուէարկութեան արդիւնքը, նուազագոյն քուէ ստացողներն ալ արձնագրել:

Ե. - Տեղեկագիրը պէտք է ստորագրուած ըլլայ ընտրողական ժողովի նիւանեւ:

Նոյնպէս կը յանձնարարենք որ Զեր Գրելիք նամակը միայն ընտրութեան վե-  
րաբերի, ուրիշ հարցերու մասին կրնաք առանձին նամակ միացնեց:

Հայրական օրհնութեամբ

Հայր Եղիշ Յանիս

Առաջնորդ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԱԹՈՎՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 Fifth Avenue, New York, N. Y.

Room 1006-1008

v

Telephone: CHelsea 3-1791

Փետրուար 9, 1934.

Պատուարժան Հոգաբարձութիւն  
Հայ Առաք. Եկեղեցւոյ եւ  
Ընրողական Յանձնախումբ  
Պինկիէմթըն, Ն.Ե.

Ազնիւ Տիարք.

Առաջնորդարանս Նկատի առաւ Թեմիդ Յունք. 21-ին կատար-  
ուած Հոգաբարձական ընտրութեան տեղեկագրութիւնը եւ գոնելով Ազգ.  
Սահմանադրութեան Համաձայն վաւերացուց զայն հետեւեալ կերպով-

Տիար	Արմենակ	Պօյաճեան	Ատենապետ
"	Մանուկ	Պաղտառարեան	Ատենադպիր
"	Քերովքէ	Քէջօեան	Գանձապահ
"	Համազասր	Բարունակեան	Հաշուակալ
"	Վահրամ	Արտաշեան	Խորհրդական

Սոյն վաւերացումով նախկին Հոգաբարձութիւնը կը դադրի  
իր պաշտօնէն եւ կը խնդրենք Աստուծմէ որ զօրավիգ ըլլայ նորակազմ  
Հոգաբարձութեանդ ու առաջնորդէ դէպի բարին եւ օգտակարը:

Աղջունիւ սիրոյ եւ գրչնութեամբ  
Մնամք աղօթարար

Առաջնորդական Տեղապահ

ԱԹԱԶՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 Fifth Avenue, New York, N. Y.  
Room 1006-1008

Առաջարկ Գ. Տուրքի թէ շնորհ  
Ռ. Ջիվանյան

Telephone: CHELSEA 3-1791

Փետրուար 9, 1934.

Պատուարժան Հոգաբարձութիւն  
Հայ Առաք. Եկեղեցւոյ  
Պինկի Էմթընի

Ազնիւ Տիարք.

Ստացած ենք Ձեր սիրելի իռլենց Յունուար 30 թօւակիր  
Նամակը նաեւ 19,00 տոլարի չեզ Եկեղեցւոյդ մէջ շրջագայեցուած  
ի նպաստ Ս. Էջմիածնի պնակի արդիւնքը։

Ներփակ կը գոնէք համապատասխան ընկալագիրը, այս առթիւ  
մեր շնորհակալութիւններն ու գնահատանքը կը յայտնենք պատուարժան  
Հոգաբարձութեանդ եւ ազգանուէր գաղութիդ որ միշտ հաւատարիմ գտնուած  
են իրենց հայրենանուէր կոչումին, Սայր Աթոռոյն եւ Հայաստանեայց  
Եկեղեցւոյ։

Ողջունիւ սիրոյ եւ ճրչնութեամբ

Մնամք աղօթարար

Առաջնորդական Տեղապահ

ԱՐՄԵՆՈՒԹԵՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՑԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 Fifth Avenue, New York, N. Y.  
Room 1006-1008

Հայոց ժողովութեան  
Հրապանի գույքը կամաց:

Telephone: CHelsea 3-1791

Հոկտեմբեր 15, 1934

ԴՐԱՅԱՌԱԿԱՆ

Առաջնորդական Հինգակիս  
Պատուարժան Հոգածարձութեանց

Ազնիւ Ծիարք:

Առաջնորդարանս պատրաստութեան մէջ է եւ ի մօռոյ  
Հրապարակ պիտի հանէ 1935 տարւոյ պատի օրացոյցներ ի  
յիշատակ մեր սիրեցեալ Խաչատրակ Առաջնորդ Տ. Ղեւանդ Ա.  
Արքեպիսկոպոսին:

Սոյն խնամքով պատրաստուած եւ գողորիկ օրացոյց-  
ները, որոնցմէ ամէն պարեպաշտ ազգային պիտի ուզէ հա-  
մը ունենալ իր տանը մէջ, պիտի վաճառուին իւրաքանչիւրը  
25 սէնդ:

Հաճեցէք տեղեկացնել որոշակէս թէ քանի՞ համ էս-  
տող պիտի ըլլաք սպառել թեմիդ մէջ, որպեսզի ըստ այն  
առաքում կատարուի:

Օրհնելով զաեզրի բոլոր սրտն եւ ցանկանալով յա-  
շողութիւն ի Տօնոնէ.-

Հայրական օրհնութեամբ  
*R. H. Oshaganian*

Առաջնորդական Հեղապահ



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 Fifth Avenue, New York, N. Y.

Կայունութեան համար առաջարկագիր:

8

Telephone: CHelsea 3-1791

Մայիս 6, 1935

Պատուարժան Հոգաբարձութիւն  
Հայ Առաք. Եկեղեցւոյ  
Պիհկէմթընի թեմին

Ազնիւ Տիարք,

Ստացուած է Զեր սիրելութեանց Ապրիլ 12 թուակիր գրութիւնը որով կը տեղեկացնէիք թեմիդ նոր շրջանի Հոգաբարձական ընտրութեանց կատարուած ըլլալը, Մարտ 17-ի Կիրակի օրը։  
Ազգ. Կեդ. Վարչութիւնը իր վերջին նիստին մէջ նկատողութեան առնելով սոյն ընտրութեանց տեղեկատուութիւնը եւ գտնելով Համաձայն Սահմանադրութեան օրինաց, վաւերացուց հետեւեալ կարգով.-

Տիարք Համազասք Բարունակեան  
Աւետիս օհանեան  
Արմենակ Պօյաճեան  
Քերոբ Քէչօեան  
Աւետիս Կարապետեան

Ատենապետ  
Ատենադպիր  
Գանձապահ  
Խորհրդական  
Խորհրդական

Սոյն վաւերացումով նախկին Հոգաբարձութիւնը կը դադրի իր պաշտօնէն եւ աղօթող ենք ու Բարձրեալ ն Ստուած առաջնորդէ նորընտիր Հոգաբարձութեան բոլոր քայլերը դէպի բարին ու օգտակարը։

Ողջունիւ սիրոյ եւ օրհնութեամբ  
Մնամք աղօթարան

Առաջնորդական Տեղապահ

ԱՐՄԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՑԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 FIFTH AVENUE  
NEW YORK, N. Y.

Telephone: CHelsea 3-1791

Խնամական  
ՅՈՒՐ ԱԼԱԿԱՐԾԱԿԱՎԱՐ  
ԱԿԱԴԵՄԻԱ ԱՆ ՏՈՐԱՆ - ՏԵՂՄԱՆ:

Օգոստոս 4, 1936

Պատուարժան Հոգաբարձութիւն  
Հայ Առաք. Եկեղեցւոյ  
Պինկէ էմթընի թեմին

Պատուարժան Տիարք,

Ամերիկայոց Առաջնորդական Տեղապահ Գեր. Տ. Մամբրէ  
Ս. Եպս. Գալֆանսի նախագահութեամբ եւ Թրոյի Հոգեւոր  
Հովիւ Աշժ. Տ. Ղեւոնը ՔՀՆՅ. Բարու Նախանի առենապետութեամբ  
Նիւ Ենթը եւ Հրազդակայից Հոգեւոր Հովիւները, Երեսփոխան-  
Ները եւ Պատ. Հոգաբարձութիւնները, ամսոյս 16-ին, Ս. Դր.  
Լուսաւորիչ Եկեղեցւոյ Մէջ բացառիկ խորհրդական ժո-  
ղով Մը գումարել ովկէ եւ լսելով Տեղապահ Մըրազան Հօր եւ  
Կեղրոնական Վարչութեան բացատրութիւնները Առաջնորդարա-  
նի նիւթական ծայրահեղ անձկութեան մատնուած ըլլալու  
մասին, եւ Նկատելով որ, Հակուակ Տեղապահ Մըրազան Հօր  
եւ Կեղրոնական Վարչութեան արտակարգ Հանքերուն, Թեմերու  
մեծագոյն մասի անհոգութեան պատճառաւ, Առաջնորդարանը  
մատնուած է անել ղրութեան մը, Միաձայնութեամբ որոշեց. —  
— Առաջնորդարանը մասնաւոր բացառիկ ԳՈԹԱ-ի ենթարկէ  
բոլոր թեմերը, եւ տեղական Հոգաբարձութիւնները իրենց  
յարմար ղատած եղանակով իրենց բաժին հանուած ողումարը  
կարճ ժամանակի մէջ գոյացնելով փութացնեն Առաջնորդարան  
ամենառւշը Մինչ եւ Սեպտեմբեր 1-ը:

— Զանալ այս անմիջական կարիքը դարմանել, եթէ կարելի  
է, առանց անդամական ժողովի գումարման:

Արդ. Յիշեալ Ժողովի նախագահ Ս. Հօրմէ եւ Պատ. Դի-  
ւանէն մեզի տրուած իրաւասութեան համաձայն, Թախանձագին  
կը խնդրենք Պատ. Հոգաբարձութենէզ որ իր լաւագոյնը  
գործ դնել բարեհաճր ընդուած երթալու Առաջնորդարանէն  
ուղարկուած հօթա-ի Հրաւէրին, Առաջնորդարանի հանդէպ  
Ֆեր պարտականութիւնը խղճմտօրէն կատարած ըլլալու հա-  
մար, զանի որ ղրութիւնը յուսահատական ըլլալու աստիճան  
յառի կացութեան մը մատնուած է ներկայիս:

Խորին յարգանքներով  
Առաջնորդական ժողովի Առենադպիր

Ճ. Յանձնաւութեան

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 FIFTH AVENUE  
NEW YORK, N. Y.  
Telephone: CHElsea 3-1791

Հայոց Առաջնորդական  
Ամերիկայի Պատուարժութիւն  
աշխարհական համագույն համարելու

Նոյեմբեր 28, 1939

Պատուարժութիւն հոգաբարձութիւն  
Պինկ էմթընի թեմին

Ազնիւ Տեարք,

Ստացուած է Զեր ամսոյս 13 թուակիր նամակը որով  
կը խնդրէիք որ Առաջնորդ Սրբազն Հայրը բարեհաճէր թեմական  
այցելութիւն մը տալ Զեր Համայնքին, իրեն կողելով որոշելու  
թուականը, ինչպէս նաեւ եթէ կը ցանկայ, իր Հետ բերելու նաեւ  
Տ. Դերենիկ Վարդապետը:

Այսու կը ժութամ հաղորդելու թէ, նորին Բարձր  
Սրբազնութիւնը Զեր խնդրանքին գոհացում տալով, որոշեց Դեկտեմ-  
բեր 10-ի Կիրակի օր Զեր թեմին տալ խնդրուած այցելութիւնը, եւ  
իր Հետ պիտի ունենայ նաեւ Տ. Դերենիկ Վարդապետը եւ կամ ուրիշ  
հոգեւորական մը:

Այս թուականը կարող էք վերջնական համարել եւ ըստ  
այնմ հարկ եղած պատրաստութիւնները տեսնել:

Իր ժամանումի որոշ թուականն ու ժամը վաղօրօք Զեզ  
կը տեղեկացուի դիւանիս կողմէն:

Հաղորդելով այս պարագան ի գիտութիւն,

Դիւան Առաջնորդարանի

Քարտուղար՝ յ. Քաջանի

ԱՐԵՎԱԿՈՒՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՑԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 FIFTH AVENUE  
NEW YORK, N. Y.

Հայոց պատրիարքության  
գրասենյակ

Telephone: CHelsea 3-1791

Առաջնորդական Վիճակիս  
Գեր. եւ Արժ. Հոգեւոր Հովհիւներու  
Եւ Պատուարժան Հոգաբարձութեանց,

Ներփակ կը գտնէք վիճակագրական հարցարանիմը մէկ պատճէնը  
զոր Մայր Աթոռուն ուղարկուած է Առաջնորդարանս:

Այսու կը յանձնարենք որպէս զի բարեհանիք բոլոր  
հարցումներուն հնարաւոր մանրամասնութեամբ եւ ճշգրիտ պատաս-  
խանները ամբողջացնել եւ փութով վերադառնել Առաջնորդարանս,  
ուղարկուելու համար Մայր Աթոռ ի Ս. էջմիածին:

Հայրական օրհնութեամբ

Առաջնորդական Տեղապահ  
(Հրաժարեալ)

Մարտ 27, 1939



ԱՐՄԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 FIFTH AVENUE  
NEW YORK, N. Y.

Քառորդ շնորհած Առաջնորդ  
Ամերիկայի Առաքելական Եկեղեցի Տէսլի բնութեան

Telephone: CHelsea 3-1791

Պատուարժան Հոգաբարձութիւն  
Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Պիտկէ էմթընի թեմին

Ազնիւ Տեարք,

Յայտնի է Զեր Ազնուութեանց թէ, Ամերիկայի Հայոց  
Պատկանական ժողովի որոշմամբ, Նիւ Շորքի Ս. Խաչ Եկեղեցւոյ  
կից, յատու կ Մատու համբարան մը կառուցուեցաւ, ուր ամփոփուեցաւ  
Երջանկայի շատակ Առաջնորդ Դուքեան Սրբազանի մարմինը:

Եինութեան գործը գլխաւորող Տիար Հայկ Գավուգճեան,  
փոխառութեամբ մը պապակեց բոլոր ծախսերը որպէս զի մեր սիրեցեալ  
նահատակ Առաջնորդ Սրբազանի մարմինը օր առաջ զետեղուէր իր Վերջ-  
նական հանգստարանին մէջ, որուն ընդհանուր գումարը եղած է շուրջ  
5200 տոլար, որ ցարդ կը մնայ անքնար:

Տարւոյս Ապրիլ 16-ին գումարուած Երեսփոխանական  
ժողովը յիշեալ պարագան նկատի առնելով, այս պարտքը համարեց  
ԱԶԳԱՅԻՆ Եւ որոշեց որ, Ընդհ. պարտքի կէսը թողելով Ս. Խաչ Եկե-  
ղեցւոյ հոգաբարձութեան, միւս կէսը գոյացնելու համար, Առաջնոր-  
դական Վիճակիս Բոլոր թեմերը բերեն որոշ մասնակցութիւն, իրենց  
վճարելու կարողութեանց համեմատական չափով, եւ յանձնարարեց  
Ազգ. Կեդ. Վարչութեան ի գործադրութիւն:

Այսու կուգանք հաջորդելու Զեզ թէ, այս նպատակին  
համար Զեր թեմին բաժին հանուած է 50 տոլար, եւ ինդրելու  
որ բարեհանիք ամառնային եղանակէն առաջ, Կարկը տնօրինել եւ Զեր  
բաժինը գոյացնելով փութացնել Առաջնորդաբարանս որպէս զի կարելի  
եղածին չափ շուտով այս ազգային պարտքը վճարուի:

Մաղթելով Զեզ կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ,

Ողջունիւ սիրոյ եւ օրհնութեամբ

Մնամք աղօթարար  
Արքայութեան Պատուական

Առաջնորդական Տեղապահ

Մայիս 2, 1939



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 FIFTH AVENUE,  
NEW YORK, N. Y.

Հայոց Սույունական Հայութիւն  
Հայոց Պատրիարքական Հայութիւն

Telephone: CHelsea 3-1791

Ապրիլ 24, 1939

Առաջնորդական Վեճակիս  
Գերատեա Արժուածական Հոգիներուն  
Եւ Պատուարժան Հոգաբարձութեանց։

Առաջնորդական Վեճակիս բոլոր Կիրակնօրեայ Դպրոցները Միօրինակ  
դասաւանդութեամբ ընթանալու համար, Ազգ. Կեդ. Վարչութիւնը դասագրքերու  
որոշ շարք մը քննութեան ենթարկած եւ վաւերացուցած է որպէս զի յետ  
այսորիկ այս դասագրքերը գործածութիւն բոլոր Մեր Կիրակնօրեայ դպրոց-  
ներուն մէջ։

Վերոյիշեալ շարքը կը բաղկանայ երեք դասագրքերէ։

- Հին Ուխտի
- Նոր Ուխտի եւ
- Առաքելական Ծրջան։

Այս դասագրքերը կարելի է տալ չափահաս աշակերտութեան, կամ  
ուսուցչուհիներուն որ գործածեն իբրեւ ուղեցոյց, ինչպէս նաև կա-  
րելի է գործածել իբրեւ Հայերէնի ուսուցման դասագիրք, այն վայրերուն  
մէջ ուր Կիրակնօրեայ Դպրոց չկայ, բայց Հայկական Դպրոց կայ։

Դասագրքերու իւրաքանչիւրին գինն է 60 Սէնթ, կանխիկ, որոնք  
պէտք է ապսպուել Առաջնորդարանէս, որոշ Կերպով ճշդելով թէ, քանի  
հատ կուզուի ամէն մէկէն։

Ողջունութիւն Առաջնորդարանի հայութիւն

Առաջնորդական Տեղապահ



ԱՐԵՎԱՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 FIFTH AVENUE  
NEW YORK, N. Y.

Հայոց Պատրիարքական  
Եկեղեցական Եպօպէ-Եկաթերիալ  
Օգոստուս Հայոց Առաջնորդութեան:

Telephone: CHelsea 3-1791

Ապրիլ 24, 1939

Առաջնորդական Վիճակիս  
Գեր եւ Արժ Հոգեւոր Հովհաններուն  
Եւ պատուաբժան Հոգաբարձութեանց,


Համաձայն 1938 Սեպտեմբեր 4-ին գումարուած Ազգ.

Երեսփոխանական ժողովի որոշման այսու կը հրահանգենք Առաջնորդական  
Վիճակիս Գեր եւ Արժ Հոգեւոր Հովհաններուն եւ Պատուաբժան Հոգա-  
բարձութեանց թէ, յետ այսու մեր եկեղեցական հաստատութիւնը պէտք է  
կոչել ։ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻ, իսկ անգլիէրէնով ։ CHURCH OF  
ARMENIA կամ THE ARMENIAN CHURCH, առանց առաքելական ազգային,  
լուսաւորչական միութեան եւ այլ ածականներու, այլ պարզ ի վերեւ  
պուտածեանի։

Հրահանգելով այս պարագան ի գիրձադրութիւն,

Արքայի սիրոյ  
Արքայի անունը

Առաջնորդական Տեղապահ



*Binghamton*

Սեպտեմբեր 18, 1952

Մեծայարդ

Պր. Ռուկան Ապարձեան  
Պէյրութ, Լիբանան

Ներփակ կը գտնէք Յիսուս տոլարի վոխգիբ մը, վճարելի  
Զեր անուան, զոր Տօքթ Բոպէրթ Պաղտասարեանը կը որկէ Զեզ,  
իբրև օգնութիւն Զեր ուսանողական ծախքերունու

Պիտի սիրեինք որ այս գումարին ստացած ըչչալնիդ  
գրութեամբ մը տեղեկացնէիք իրեն, առ ի միամտութիւնն Ստորեւ  
կը գտնէք իր հասցենու

Ողջունիւ եւ օրհնութեամբ  
Մնամք աղօթաբար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Dr.R.M.Bagdasarian  
108 Oak St.  
Binghamton, N.Y.  
U.S.A.

Bingkawon

Փետրուար 13, 1952

Մեծայարգ

Տիար Քերովքէ Քէչոյեան  
Ատենապետ պատ. Հօգաբարձութեան  
Պինկէմթընի Համայնքին,

Ստացած ենք տարւոյս Յունուար 27 թուակիր Զեր տեղեկատուութիւնը  
որով կը յայտնէիք թէ Յունուար 18-ին կատարուած է Համայնքիդ Հօգա-  
բարձական նոր ընտրութիւնը եւ ներկայացնելով նոր կազմը կը խնդրէիք  
վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի առնելով որ յիշեալ անձնաւորութիւնները կանոնաւոր կեր-  
պով ընտրուած են եւ կը վայելեն ընտրողներու մեծ մասին վստահութիւնը  
իբրև եկեղեցւոյ նախանձախնդիր եւ անձնուեր անդամներ, այսու կը  
վաւերացնենք անոնց ընտրութիւնը հետեւեալ կարգով.-

Տեարք Քերովքէ Քէչոյեան  
Մանուկ Պաղտասարեան  
Արշամ Գրանեան  
Արմենակ Պօյանեան  
Պետրոս Ռէճեպեան

Կը յանձնաբարենք որ Հօգաբարձական նոր կազմը առաջին առթիւ  
նիստ գումարէ եւ կազմէ իր դիւանը եւ տեղեկագրէ Առաջնորդարանս:

Կ'օրէնենք նորակազմ Հօգաբարձութեան բոլոր անդամները եւ  
կը մաղթենք որ անոնք բոլորեն արգիւնաւոր գործունեութեան շրջան մը  
ի պայծառութիւն մեր սուրբ եկեղեցւոյ եւ Տիրոջը փառքին Համար:

Հայրական սիրոյ ողջունիւ  
Մնամք աղօթարար

Փոխանորդ Առաջնորդի Հայոց Ամերիկայի

Վագոնեան աղջուսոց  
Եվեկողակին Բոզրուրոց  
Առաջարկութ էջմանը

• Տօղոնեամբ յառա

• Ամոնծ աղջուսոց Քանամանու դշեալոց 10 Առաջոր մասու 19 Ցը Երազքիսմետուն  
կմստոյրունունք Ռայթենցիկ Մցց Թջամասուն չ Խոշին Եվթույղին  
Հարամուտ Բոհման 28 Լզրնցիկ Վնցից Թուու 1սի 1սուն

• Վասմոյոց Ակ քանամ 1 Երազքիսմետուն  
• Ակ տաճ 0 Ցը Համան Հազքիսմետիունունք Առաջոր ունան կմստոյրունունք  
Հափորդոյ Բայթենցիկ Մցց Բատցի ոչիունվլուտ Ոչիունսք Ետիմաստոյրունունք  
+ Սունք Ետիմաստոյրունունք Առաջոր մա Խոհունց 1ս Վատիկ

• 81  
• Առաջոր մա Խոհունց 1ս Երազքիսմետունունք 19 Ցը Երազքիսմետունունք 19  
19 Երազքիսմետունունք Աջտանունք 19 Հանունք Նման աղջուսոց

• Երազքիսմետունունք 0 Ամե Վեցնեմոց

• Երազքիսմետունունք 0 Ամե Վեցնեմոց  
0 Բայթենցիկ Մցց Կոնկունք • Ո  
կնաւսամակ Ետիմաստոյրունունք Ետիմաստոյրունունք  
Ետիմաստոյրունունք Խոհունց մավա  
նմանունք

ՎՐԱՀՎՅՈՒՄ ՅԱԲԱՇ ՆԺԱՋՄԱԴ  
ԱՍԽԱՌԱՎԵԱՅՄ ԳԵԱՄՈԱ

Ճամացինու  
Դպրոցներ բաժանման օրուա

«ԴՐԱՅԻ ԱՅՆԵՐՄ և Ճահ  
գեց իւլուզայ ոչ զավառագե և ստ ամոն իւլուզանա?

• ԵՍ ԳՐՈՒ ՎԵՐԱՄՆԵՄՄԻ ՎԶ  
ԴՐԱ Առ առ ԾՅՑԿՄ ԱՐՑՈՒ, • ԵՆՄ Ի ՍԻՍՆՍՐ ԽՆՈՒՀՄՄԸ ԽՎՈՒ ԱՅ  
ՀՅՄԵՐ/ԼՎԵՐ ՎԻՎԻ ՄԵՐՔԵՐ ՎԻՆՈՄՄԱԿԱ • Ո ՍՅՐՄԿ ՎԶ

• ԱՅՋԱԿՄ ՀԱՅ • ՏՐԱՅ ՂԱԿԵՄՈՐ • Ո ՀԱՅ ՇՊՈՄԹՁՄ ԽԵ ԱՅՋԱԿՄ ԱՅ  
-ԴՄՈՐ ՅԻ ԳՅԱՅ ԵՎ ԳԵՐՄԱԿԱ ԱՅՄ ԱՅՋԻ ԱՅ • ԶԵՅ ՇՎԵՅ  
-ԱՄ ՂԱԳՆԵՐՈ ԱՅԻՄԿԻՐՈ ՎԻՆՈՎԱ ՄԵԿ ԳՐԱՄ ՀԱՎԵՐԱՄՆԵՄՄԻ ՀՄՐ  
-ՄՐԱԿ ԱՎՄԱԿՄՈՒ ԱԳԸ ԻՇ ԼՈՂՄՈՒՄ ԵԶԸ ՄԵՌԵԿԱ ԽՍՐՄ

• Եղյ ՄՎԻ ԿԵՎԿ ԵՎԵՆ

• ԱՅՋՐՎՀԵԼՎՆ  
ԲՈՒԹԵԿԻ ԴՎՄԱԿՄՈՐՄ ՄԱՆՎՆԸ • Ո  
ԵՎ ԽՄԵՄԱԿ ԱՅԻՄԿԱ  
ՌՄՐՄՈՐ ԱՄՈՐ

1955 ՕԳՍԵՐԻ 15. ՏԵՂՄԱԴ

548 էկ

Թիւ 220  
Մեպստեմբեր 26, 1955

Պատուարժան  
Մխական Խորհուրդ  
Ս. Գրիգոր Լուսուլորիչ Ակեղծելոյ  
Պիռկչէմթըն.

Ազնիւ սիրելի մեր,

Թիւ Տիւրի Սհանեանի առնապետութեամբ գումարուանք  
Մխական Ժողովին մէջ ընտրուած է Համայնքի Թեմական Պատգամառուրց և  
անօր ընտրութիւնը Հաղորդուած է Առաջնորդարան Ներկայացուած Ձեր առ-  
րեկան տեղեկացրին մէջ, բայց Հարկ է որ այդ ընտրութեան արդիւնքը տե-  
ղեկադրէց Առաջնորդարանո առանձին գրութեամբ, որը կանոնականութիւն է ը-  
ներկայացնելի Թեմական Պատգամառուրական Ժողովին։

Տեղեկագրութիւնը պէտք է ստորագրուած ըլլոյ Մխական Ժողովի  
առնապետի և առնապիրի կողմէ և կրելու է պաշտօնական կնիք, եթէ ու-  
նիք նաև երր ծարքնաիր Պատգամառուրց Թեմական Պատգամառուրական Ժողովին  
Ներկայանայ իրեն ընտրութեան վերաբերմամբ պէտք է ունենայ առանձին վե-  
կայական, ույսպէս ստորագրուած և կնյուած։

Հաղորդելով զայտ առ ի գիտութիւն ան

Մամայ օղջունիւ սիրոյ  
Ազօթաբար

ՎԱՐԴԱՆ ԱՀՆԵ. ՄԿՐԵԱՆ  
Առաջնորդի Փախանորդ



# ԱՐՄԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N.Y.

Թիւ 1245  
Նոյեմբեր 19, 1956

Գալուստ Արքան  
Ծխական Խորհուրդ  
Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պիտիկէմթըն.

Ազնիւ սիշելիք մեր.

Այսու կու գանք անգամ մը եւս շեշտել, թէ մեր թեմի կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, թեմին մէջ գտնուող բոլոր եկեղեցական կալուածներու սեպհականաթուղթերը պէտք է փոխանցուին եւ արձանգըրուին Առաջնորդարանիս անունին Արդէն մեր ծուխերէն կարեւոր մասը իրենց եկեղեցական կալուածներու սեպհականաթուղթերը փոխանցած են Առաջնորդարանիս, մնացեալ ծուխերու կարգին ձեր ծուխն ալ հարկ է որ առաջին առթիւ լրացնէ փոխանցման գործողութիւնը:

Մեր թեմական Պատգամաւորական ժողովները կրկնակի անգամ ըզբաղած են այս օրէնքի գործադրութեան հարապպ հարցով եւ յանձնարարուած է մեզի եւ թեմական Խորհուրդին, հետամուտ ըլլալ որպէսզի կալուածներու փոխանցման վերաբերեալ կանոնադրութիւնը անյապաղ գործադրուի մեր բոլոր համայքներուն կողմէ:

Անհրաժեշտ կը համարինք յիշեցնել որ թեմի կանոնադրութեան յօդուածները—18 /բ/, 67 /իա/, 67 /իդ/, 73, 79, 99, 100, 101 ե-105— կը միտին պաշտպանել եւ թոյլ չտալ որ կալուածները ոււէ սխալմունքներու եւ վէճերու պատճառաւ անհարկիօրէն գրաւի դրուխն կամ ձեռքէ հանուին կամ ոււէ ձեռով վաճառուին: Ծուխերուն պատկանող շէնքերը Առաջնորդարանիս փոխանցուելով հանդերձ իւրաքանչիւր ծուխ կը պահէ իր օրինական իրաւունքը շէնքերուն վրայ եւ առանց Ծխական ժողովի որոշումին չի կրնար կարգադրութիւններ ընել կալուածոց մասին:

Պրն. Վինսենտ Եարտըմ, որ կը զբաղի եկեղեցական կալուածոց սեպհականաթուղթերը Առաջնորդարանիս անունին փոխանցման գործով, կարող է ձեզի խորհուրդ տալ կալուածոց փոխանցման գործողութիւնը ինչպէս կատարելու մասին: Հաճեցէք յարաբերութեան մէջ մտնել Պրն. Եարտըմի հետ, որուն հասցէն կերեւի ստորեւ: Կուզենք յայտնել թէ կալուածոց փոխանցման համար ըլլալիք իրաւական ծախքերը պիտի հոգայ Առաջնորդարանս:

Մնամ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

*Mr. Vincent Yardum*

Mr. Vincent Yardum  
41 East 42nd St.  
New York, N.Y.

ՄԱՄԲՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1289  
Դեկտեմբեր 5, 1956

Գառաւացքան  
Մխական Խորհուրդ  
Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկէչմթըն.

Յարգելի Տիաբը.

Ապաշնորդ Սրբազն Հօք Ծրահանգով այսու կը յայտնենք  
թէ կարգադրուած է ոք Արժանակնորհ Տ. Վարդան Քէնյ. Տ. Առաքուր-  
եած Դեկտեմբեր 30ի կիրակին Զեր ծուխը այցելէ եւ Ս. Պատարագ Բա-  
ռուցանէ:

Այս կարգադրութիւնը արդէն յայտնած ենք Յէր Կարգանի  
ոք առաջին առիթով Զեզի Հետ յարաքերութեան մէջ պիտի մանէ, ան-  
զեկացնելու թէ երբ Հոդ կը ժամանեն

Հազարդելով զայտ առ ի գիտութիւն եւ յայտնելով Զեզի  
Մեր յարգանքներն ու Համակրութիւնը.

Մեմ Խորին յարգանօք

Սուրէն Մանուէլիսն  
Դիւտնապետ

Թիւ 15229  
Յունիսի 31, 1957

Պատուարժան  
Այսպահան Խորհուրդ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ  
Գինը էմբըն.

Յարգելի Տիարք.

Առաջնորդ Սրբազն Հօր յանձնարարութեամբ այսու կը  
յայտնենք թէ Ձեր Փափաթին Համաձայն կարգադրուած է որ Հոգեցնորք  
Տ. Մեսրոպ Վրդ. Սէմէրճեանը այցելէ Համայնքը եւ Սարտ Յի Կիրակին  
Ս. Պատարագ Մատուցանելով Միմիթարէ քարեպաշտ ժողովուրդը

Հայր Մեսրոպ յարարերութեան մէջ պիտի մտնէ Ձեր Հետ  
յայտնելու իր Հող Ժամանակն Խուականց թէ կը վախարիթ զուա եւս  
կընաք իր Հետ յարարերի ստորիւ տրուած հասցէին գրելով

Նթէ Հարկադրաբար ուսւէ փոփոխութիւն ըլլայ Հոգին  
մտին. իսկոյն կը Հաղորդենց Ձեզի թէ ով պիտի այցելէ ձեզին

Հաղորդելով զայս առ ի զիտութիւն եւ Ձեզի յայտնե-  
լով մեր լաւագոյն զգացումներն ու համակրաւթիւնը.

Մնամ Խորին յարգանօց

Սուրբն Մանուկյան  
Շիւանապետ

Թիւ 1883  
Յունիս 7, 1957

Պատուարժան  
Մխական Խորհուրդ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկի էօթըն.

Ազնիւ սիրելիք մեր,

Նկատի ու նենալով թեմիս մէջ այցելու Հովհան մը  
կատարելիք զերին անհրաժեշտութիւնը, Թեմական Խորհուրդի գիտու-  
թեամբ այդ կարծուր պաշտօնին կոչած ենք մեր Հոգեւոր դատու ար-  
ժանաւոր եկեղեցականներէն Արքանաշնորհ Տ. Վրթանէս Աւագ Քէնյա.  
Փափազեանք:

Այս պատճեամբ նէն զգուշելով՝ գիտակիս անհովիք  
եկեղեցիներու այցելու թեանց համար պատրաստու ենք ժամանակացոյն  
մը, ըստ օրում Տէր Վրթանէս Ձեր Համայնքին մէջ պիտի ըլլաց Օ-  
գոսոս 25ին, թէ Ս. Պատարագի մասուցմամբ միինքնից ու մեր ժո-  
ղովուրդը և թէ ծուխիդ մէջ կատարելու Հովհական աշխատանքները

Այսու կը հրահանգենք պատուարժան Մխական Խորհուր-  
դիկ կարծուրութեամբ նկատի ունենալ յիշեալ թուականը և ամէն  
կերպով օգնել Տէր Վրթանէսին՝ պիտի ընդունելու համար անոր առցե-  
լութեան գործը յօդուտ թեմիս Հոգեւոր կեանքին և Առջնարար-  
քանիս:

Հաղորդելով զայտ տա ի գիտութիւն և յաւագու որ  
սիրով պիտի գործակցիք Առջնարարներ, Կօրհնենք զնեզ և կը  
մաղթենք եկեղեցաշէն Ձեր գործոց յախողութիւննեւ:

Մեմբ Հայրական սիրոյ ոզչունիւ  
Ակօթարար

ՄԱՄԱՐԵ ԱՐՁԵԳԻՍԿՈՉՈՍ  
Առջնարդ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Օգոստոս 8, 1957.

Արժանաշնորհ  
Տ. Խորեն ՀՀՆ. Մամիկոնյան,  
Նախագահ Ս. Համբարձում Հայք. Եկեղեցայ  
Պատարքան Ծիռկան Խորչուրդի.  
Պրիճըքի, Թբ.

Ազնիւ Միքելիս Մեր.

Սակայ ենք ձեր ամսոյ 7 թվակիր նամակը. Վեր արեքն է  
Հոգեշնորհ Ազնիւ Վարդապետի Հիւանդաշնորհ

Հայք Ազնիւ Երկարածու սրբի ուսուցչին ու յանձնիկի Հիւան-  
դաշնորհ Փախառըրեւելու և մասնացիներու ինստիտուտի ենթակառած լուսա-  
պատուած է, եւ յայնի է թէ նա նիւթապէս անկարգ ընլաւով Հար-  
կացրած ենց Առաջնորդարանին եւ կամ Հոգեւորականց Նիւթագրամին  
օգնել իրենց

Այս ու բժիշկները յանձնաբարու են որպէսզի Մինիարօւիս  
մասնագէտ բժիշկի մը յանձնուած որը կարգ պիսի ըգլայ եր որոին վրա  
զարեւութիւն կատարել, եւ այդ ի հորդի մեծ զաւարի մը պէտք ան-  
հրաժեք կը նեն. եւ որովհենու յանինը ուսւէ պիսանի կամ ոյզ անսուի  
պարագայի մը որամազրեւիր գումար, կը երազի որ շըշմրերականու մը  
զիմել մեր Համայնքին ըստ, որպէսզի մեր բարեկաց ուզուարդը իր  
նաւի բառուաւթիւններով պնակին հանի մեր գժրագը Հոգեւորականին

Այսունկավ զայս ի գիտաթիւն, մամց Հայրական Արք յ  
Ողջունիւ.

Ազօթաբար

ՄԱՄՐԱՅ ԱՐԵԿԱՍ. ԳԱԼՅԱՅԱՆ  
Առաջնորդ Ամերիկայի Հայոց

Եմողավագ զահանձնութեան  
Ղուկաս Առաքել Առաքել

Առաջարկութեան  
Եվրոպի բանակը

• Առաջարկութեան նորման մեջ ըլլութ  
-զեզէր իսլամական ու քրիստոնէկան կ ստ պատ իսլամական  
• Ամերիկայի վաճառքութեան մեջ օգոստ մայիսի առաջարկութեան նորման մեջ ըլլութ  
-առաջարկութեան մեջ կազմակերպութեան մարդկան առաջարկութեան մեջ ըլլութ  
• Ամերիկայի վաճառքութեան մեջ օգոստ մայիսի առաջարկութեան նորման մեջ ըլլութ

• Ամերիկայի վաճառքութեան մեջ օգոստ մայիսի առաջարկութեան նորման մեջ ըլլութ  
-առաջարկութեան մեջ օգոստ մայիսի առաջարկութեան նորման մեջ ըլլութ  
• Ամերիկայի վաճառքութեան մեջ օգոստ մայիսի առաջարկութեան նորման մեջ ըլլութ

• Ամերիկայի վաճառքութեան մեջ օգոստ մայիսի առաջարկութեան նորման մեջ ըլլութ  
-առաջարկութեան մեջ օգոստ մայիսի առաջարկութեան նորման մեջ ըլլութ

• Ամերիկայի վաճառքութեան մեջ ըլլութ

• Ամերիկայի վաճառքութեան մեջ ըլլութ  
-առաջարկութեան մեջ օգոստ մայիսի առաջարկութեան նորման մեջ ըլլութ

Տարբերակ 11. 1957  
Փետրվար 3002

ԹԳԻՆՈՂՄԱՎԿԱ  
ԱԹԳԻԴՐԱՑՈՒ ԱՀԱՅՄԱ

ՏԵՂՄԵՄՄԻ ՂՎԱՄՈՎ ՅԱՊՈ

• ՂՎԱՎԵՐԱՍՆԵՐՋՄԻ ԹԱԳԱՄԻ ՄԳԸ ՂՂՇԵՑ  
- ՃՆԳԻԳ ԽԱՆՋԲԵՄՄՈՐ ԴԳ ՂՎԱՎԵՐԱՍՆԵՐՋՄԻ Վ ՍՄ ԱՄՄԵ ԽԱՆՋՆՄԱՆՄԴ

ՂՄԱՐՄԱՐՄԱՐ ՆԵՐ ՄՎ ՃԱՑՄԻԿԱՆԿՈՄ ՎԱՎԻՆ ՎԵՐԾ ԻՄՄՉ ՄՀՏ ՀՂՄԳԻՎՈԾ ՄԻՆՔ  
ԻՄՄՉ ԻՄՋՈՒՄՄՈՂ ԻՎԻԽ ՈՄԿԻՄԿԻ ԾԱՆՑՆԳԻԳ ՅՈՎ • Ո ՎՃՄԱԶ ԱՎՀ ԻՄՄԻ  
ՎԱՎԻՆ ՃՆՐ ՄԳԸ ՂՎԱՄՄԻՄՄՈՎ ԽԱՆՋՎԲ ՄԱԳԻ ՆԿՈՄ ՎԿԱՆՄՄԴ ՄԻՏ

• ՄԱԿԱՎԵՐ  
- Ի ԱԿԱԿԻՄՄՈՎԻՆ ԱԲԻՄ ԼՂՄԱՏԻ ԲՄՈՋԻ? ՎԱՎԻՆ ՄՄՄՉ ՄՀՏ ՊԱՍՄԱԿՈՒՄ  
ՄՄՈՃ ՊԱՄՄՄ ՄԱՍՈՐԵԴ • Տ ԻՎԱՇ ԱԿՈՆՄՄԴ • Տ ԻՎԻԽ ՄԱՆԳԵԽ ՈՎՎԵՍՔ ՎԻՄԵ  
ԱՄՄՇՅ ՎԱՎԻՆ ՃՆՐ ՄԳԸ ՂՎԴՇ ՈԲՍՈՐՄ ՃԸ ՄՀ ՔՄՄԵ ՎԵՐԾ ՂՎԱՄՄԵՇ ՆՄՍՈԼՈՂ  
ԱԿՈՎԻՇ • ԻՎԱՇ ԱԿՈՆՄՄԴ • Տ ՆՄՍՈՐՎԱՇ ՈՄԿԻՄՄԱՆՇՊՄԴ ԻԳՆԵ

• ԺՄՈՎՏ Վ ԽՂԵՆՄՄԵ

• ՂՄՋՐԴՆԿԻՂՎԿԱ  
ԲԱՆՑՆԳԻԳ ՅՎՅԱՇՈՐՄԱՆ ՄԱՆՎԵՖ • Ո  
ՆՄԻՄԿԱՎ ՈՄԿԻՎՎՈ ՂՄՐՄՊՄԱՍՈՐԵ

1951 ՄԳՋՐԳՄՄ  
810E ՂՎԵ

Թիւ 3197  
օհորուար 17.1958

Անձայրը

Տիւար Անձական Օհորուար  
Անձական Միական Խորհուրդ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պրիետէթըն.

Յարդիկի Գրն. Օհորուար.

Առաջնու է նոր անձաւուիք Ձեր ծիսկան անձեկապիքը, որու Կ  
գեղեցիաց նէիք ինչ Ձեր առաջապես թիւմբ զումբուան Միական ծովութիւն ուշ  
շնորհած է Տիւական Խորհուրդի անձաւուըք, և Ներկայացնելով բնորութեան  
արգիւնը. և Խնդրեի Շնորհած անձրուն պաշտօնի վաւերացման պաշտօ-  
նագիւըք.

Նկատի ունենալով որ Ներկայացնելով անձրու կանանար հեր-  
պով բնորութեած էն և իրեւ կեցեցւոյն պարտանախ անզմներ կը վա-  
յելին բնորութեած վարութիւնը, պրու և վաւերացնելով անոնց ըն-  
դութիւնը, բայ հանեւեալ ին.-

Գրն. Անձար Օհորուար

Մանուկ Պազտասարեան  
Արշամ Գրիգոր  
Նշան Էլյույս  
Հայ Մարտիրոս  
Տօնք. Վահ Կարպատեան  
Կերի Մանկերեան

Կը մազթիւ պատուարժան Միական Խորհուրդի բուլոր ան-  
զմներուն Համարու և բնորութեաւիք զորունելութիւն յօւստ Հայ. Ե-  
կեղեցւոյ պայծառաւթեան և իսկօրին ամէնքիդ առաջաւթեան էլ բար-  
դութեան Համար.

Մամար սիրու ոզչունիք  
Աղօթարար

ՄԱՐԱՐ ԱՐԵՎՈՒՄԿՈՉՈՒ  
ԱՆԱՀԻԿ ՀԱՅՈՒ ԱՖԵՐԵԿԱՐ

Թիւ 3648  
Սեպտեմբեր 10, 1958

Պատուարժան  
Մխական Խորհուրդ  
Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկիչմթըն.

Ազնիւ սիրելից մեր,

Ի պատասխան Ձեր վերջին նամակին, այսու կը յայտնենք Ձեր սիրելիութեան թէ կարգադրութիւն ըրած ենք որ Թբոյի Ս. Պետրոս Եկեղեցւոյ հոգեւոր Հովհաննես Արծանակնարէ Տ. Ամրագան Քանչըն Ձեր մէջ ըլլայ Սեպտեմբեր 28ի կիրակին:

Տէր Հայրը Ձեզի պիտի գրէ իր Ծող Ժամանման թուականկ ու ժամը, որպէսզի Հարկ եղած կարգադրութիւնը ընէր թէ Ս. առարագի եւ թէ իր իշեւանի Համար:

Օրէնելով պատուարժան Մխական Խորհուրդիդ բոլոր անդամները եւ մաղթելով ամէնքիդ առաջնորդութիւն եւ բարօրութիւն.

Մեմբր Հայրական սիրոյ ողջունիւ  
Աղօթարաբ

ՄԱՍՏՐԻ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Բիշ 108  
Մարտ 18, 1959

Մեծայարդ

Տիար Սանուսկ Պաղտասարեան  
Առենագայիր Ծիական Խորհուրդի  
Գրնկասթընի Ս.Գրիգոր Հուստուրիչ Եկեղեցւոյ,  
Նիւ Եօրք.

Ցարգելի Պր.Պաղտասարեան,

Ընդառաջելով Մարտ 13 Քուակիր Զեր Խնդրանքին,  
Առաջնորդ Արրազանց Կարգադրած է որ Բրոյի Ս.Պետրոս  
Եկեղեցւոյ Հագեւոր Հօվիտ Արժ.Տէր Վարդան ՀՀՆՅ.  
Տ.Առաւուրեան, Ապրիլ 12ին այցելէ Համայնքից, և  
Ս.Պատարագի Մասուցմամբ Միիրարէ հաւատացեալ մօղա-  
վուրդը:

Տէր Վարդան Բահանայի յանձնաբարուած է Զեզի  
Հետ յարաբերութեան մէջ մտնել, և իր Հօդ Ժամանան  
Բուականց Ձեզի Հաղորդելու

Մնամք սիրոյ ոզշունիք  
Աղօթարար

ՄԻԱԲՈՒՆ Ս.ՎՐԴ. ԿՐՃԻԿԱՆ  
Առջնորդական Թօխանորդ

Թիւ 1441  
Օգոստոս 9, 1960

Բարեշնորհ  
Գրիգոր Մրկ. Ոսկանեան  
Հոգեւոր Սատակարար Ս. Համբարձում Եկեղեցւոյ  
Պրիճփորթ.

Սիրելի Գրիգոր Մարկարագ,

Առաջնորդ Մրբազան Հօր Հրահանգով՝ այսու Զեզ եւ պատուարժան  
Մխական Խորհուրդիդ կը յիշեցնենք, թէ Առաջնորդարանի Հանգանակութեան  
արշաւին առթիւ ձեր ծուխին 500.00 տոլարի գօթա սահմանուած էր:

Տարւոյս Մարտ 6ին ձեր ծուխին մէջ սարքուեցաւ ճաշկերոյթ մը՝  
յիշեալ գօթան գոյացնելու համար, բայց մինչեւ ներկայ թուականը Առաջ-  
նորդարան չէր դրկած այդ գումարը:

Հաճեցէք, Օգոստոս 25էն առաջ, Առաջնորդարան դրկել Հանգանա-  
կութեան հաշուեկշիռ եւ այդ նպատակին համար ցարդ գոյացած ամրողա-  
կան գումարը:

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան  
Դիւանապետ Առաջնորդարանի

Թիւ 1574  
Սեպտ. 22, 1960

Սեծայարգ  
Տիար Մանուկ Պաղտասարեան  
Առաջնադպիր Ծխական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկհամբըն.

Յարգելի Պրն. Պաղտասարեան,

Ինչպէս մեր նախորդ Թղթակցութեամբ գրած էինք Ձեզի,  
պատուարժան Ծխական Խորհուրդի ղիմումին ընդառաջ երթալով կար-  
գադրութիւն եղած էր որ Սեպտ. 2ին Գերաշնորհ Տ. Մամրէ Արք.  
Գալ ճական 2օր Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցանելով միմիարէր  
Հաւատացեալ ժողովութիւն:

Գերաշնորհ Մամրէ Սրբազն, Շարաթ, Սեպտ. 24ին, կէ-  
սօրէ ետք ժամը 1.15ին Նիւ Նորքէն կը մեկնի Մօհաց Օղանաւային  
Ընկերութեան 203 թոհջոռվ եւ Պինկհամբընի օդանաւակայանը ԿԸ  
հասնի կեսօրէ ետք ժամը 2.10ին:

Հանեցէք կարգադրութիւն ընել որ Ձեր ծխականերին  
մին զիմաւորէ Նորին Սրբազնութիւնց:

Մնամ խորին յարգանօք

Ապերէն Մանուկ Ետան  
Դիւանապետ

Թիւ 3152  
Հոկտեմբեր 25, 1961

Մեծայարգ  
Տիար Մանուկ Պաղտասարեան  
Առենադպիր Ծխական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկ Համթըն.

Յարգելի Պրն. Պաղտասարեան,

Նոյեմբեր 19ին, Արժանաշնորհ Տ. Կարդան ՔՇՆՅ. Մկրեանի տեղ,  
Արժանաշնորհ Տ. Կարէն ՔՇՆՅ. Կտանեան պիտի այցելէ ձեր Համայնքին  
ու Ս. Պատարագ պիտի մատուցանէ ձեր Եկեղեցւոյ մէջ:

Իսկ 1962 Փետրուար 18ին, Տ. Կարէն ՔՇՆՅ. Կտանեանի տեղ, Տ.  
Կարդան ՔՇՆՅ. Մկրեան պիտի այցելէ ձեր Համայնքին ու ձեր Եկեղեցւոյ  
մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ:

Դեկտ. 24ին, Արժանաշնորհ Տ. Վրթանէս Աւագ ՔՇՆՅ. Փափազեան  
պիտի այցելէ ձեր Համայնքին, իսկ Ցունուար 14ին՝ Հոգեշնորհ Տ.  
Հմայեակ Տ. Վրդ. Խնդոյեան Այնուէնեաւ, ձեզի նախապէս զրկուած  
այցելութեանց ժամանակացոյցին Համաձայն, Սարտէն մինչեւ Ցունիս  
պիտի ունենար այցելու Եկեղեցականներ:

Զայս Հազորդելով ձեր սիրելութեան առ ի գիտութիւն.

Մատ խորին յարգանօք

Սուրէն Մանուկյան  
Դիւտնապետ

Թիւ 4750  
Դեկտեմբեր 13, 1962

Մեծայարգ  
Յիար Սանուէկ Պաղտասարեան  
Առենադպիր Միական Խորհուրդի  
Պինկ Համթընի Ս. Գ. Լուս. Եկեղեցւոյ

Ցարգելի Պրո. Պաղտասարեան,

Նախորդ շաբթուն Զեզի ղրկած էինք Զեր Համայնքին այ-  
ցելու հովիւներու ժամանակացոյցը:

Այսու Զեզի կը Հաղորդենք այդ ժամանակացոյցին Վրայ  
եղած անհրաժեշտ փոփոխութիւնները. ըստ Հետեւեալին:

Տ: Զաւէն Վրդ. Արզումանեան, ինչպէս Զեզի գրած էինք,  
պիտի փոխարինէ Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեանին, Դեկտ. 16ի կիրա-  
կին: Ան պիտի ժամանէ Պինկ Համթըն Նարաթ. Դեկտ. 15ին, կւսօրէ ետք  
ժամը 2.40ին:

1963, Յունուար 5եւնին Զեզի պիտի այցելէ Առաջնորդական  
Փոխանորդ Հոգ. Տ. Միուռն Ս. Վրդ. Կրճիկեան, Հայկական Սնունդի առ-  
թիւ Զեր Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցանելու համար: Ան պիտի  
գրէ իր հոգ ժամանման թուականը եւ ժամը:

Հայր Միուռն պիտի փոխարինէ նաև Արժ. Տ. Վարդան ՔՀՆՅ.  
Մկրեանի: Ապրիլ 12, 13, 14ին, Աւագ Նարթուն եւ Զատկին Զեզի Հետ  
ըլլալու համար: Զեզի պիտի տեղեկացուի իր ժամանման թուականը:

Գտտահ ենք եղած սոյն կարգադրութիւնը գու պիտի ձգէ  
Զեր պատուարժան Միական Խորհուրդը եւ Համայնքի Հաւատացեալ ժո-  
ղովուրդը:

Ծնորհաւորելով Զեր Ս. Սնունդը եւ մաղթելով Զեզի ա-  
ռողջութիւն, երջանկութիւն եւ երկար կեանք.

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Սանուէլեան  
Դիւանապետ

Թիւ 4021  
Փետրուար 16, 1962

**Մեծայարդ**

Տիար Սանուէկ Պաղտասարեան  
Առենազպիր Միական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկլամբըն.

Յարդելի Պրն. Պաղտասարեան,

Առաջած ենք ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդե թէ 1962,  
Ձւենուար 6ին գումարուած Համայնքի Միական ժողովը կատարած է  
Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով ցուէար-  
կութեան արդիւնքը. կը խնդրե ընտրուած անձերուն վաւերացման պաշ-  
տօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր Միական ժողովը տեղի ունեցած է  
Թեմական հանոնադրութեան արամազրութեանց Համաձայն, եւ ընտրուած  
անձերը, իրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր ու նուիրեալ անդամներ,  
կը վայելեն ձեր Համայնքի ժողովուրդին վատահութիւնը, այսու կը  
վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ Ծետևեալին.

**Տիար**՝ Աւետիս Օհանեան  
Սանուէկ Պաղտասարեան  
Արշամ Գրանեան  
Տօրթ. ճօրծ Ունեպեան

Կը յանձնաբարենք որ առաջին արթով Առաջնորդարան զրկեց  
Ձեր Միական Խորհուրդի նոր զիւտնի կազմի անուն-հասցէները:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձե-  
զի եւ պատուարժան անդամներուն յաջող ու արդիւնաւոր գործունիւ-  
թիւն, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն Համայնքի  
մեր սիրեցեալ ժողովուրդին:

**Սնամք Տիրաւանդ սիրոյ ողջունի**  
Եւ օրհնութեամբ  
Աղօթարար

**ՍԻՐՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 4098  
Մարտ 16, 1962

Մեծայարդ  
Տիար Մանուկ Պաղտասարեան  
Առենադպիր Ծխական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Էլուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկէամթըն.

Յարգելի Պրն. Պաղտասարեան,

Նախապէս Զեզի Հաղորդուած Հովուական այցելութեանց  
ժամանակացոյցին Համաձայն, Արժանաշնորհ Տ. Վրթանէս Աւագ  
ՔՇՆՅ. Փափազեան, որ Մարտ 18ին պիտի վոխարինէ Արժ. Տ. Գառ-  
նիկ ԶՇՆՅ. Հալլաճեանին, անոր Հիւանդութեան պատճառով, Ապրիլ  
15ին, Սաղկազարդին առթիւ, պիտի այցելէ Զեր Համայնքը, Սուրբ  
Պատարգի մատուցմամբ միսիթարելու Համար Հաւատացեալ ժողովուրդը:

Դժբախտաբար կարելի պիտի չըլլայ Զատկին առթիւ այցե-  
լու Հովիւի կարգադրութիւն ընել Զեզի Համար, տրուած ըլլալով  
որ Առաջնորդական Փոխանորդ Հայքը այն օր պիտի պատարագէ Սիրա-  
գիւզի Եկեղեցւոյ Մէջ, իսկ Տ. Վրթանէս Աւագ Բահանան ալ պիտի  
պատարագէ Պրիճնորթի Մէջ:

Ուրեմն, Համեցէք Տաղկազարդի Ս. Պատարագի Համար կար-  
գադրութիւններ ընել:

Տէր Վրթանէս Քահանան Զեզի պիտի իմացնէ Հոդ ժամանման  
թուականը եւ ժամը:

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան  
Դիւանապետ

Թիւ 4069  
Մարտ 7, 1962

Սեծայարք

Տիաբ Մանուկ Պաղտասարեան  
Առենադպիր Ծխական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկ Համբըն.

Յարգելի օրն. Պաղտասարեան,

Առաջնորդ Սրբազն Հօր կարգադրութեան Համաձայն, Արժ.  
Տ. Վրթանէս Աւագ ԲՏՆՅ. Փափազեան, Մարտ 18ին պիտի այցելէ Զեր  
Համայնքը եւ Ս. Պատարագի մատուցմամբ Միիթարէ բարեպաշտ ժողովուրդը:

Տէր Հայըն իր ատենին Զեզի պիտի տեղեկացնէ իր ժամանան  
թուսկանը եւ ժամը: Ուրեմն, Հաճեցէք Զեր կարգադրութիւնները ընել ըստ այնմ:

Մնամ Խորին յարգանք

Առըէն Մանուկիեան  
Դիւանապետ

Թիւ 4664  
Նոյեմբեր 7, 1962

Մեծայաբգ

Տիար Մանուկ Պաղտասարեան  
Առենադպիր Միական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Լուս, Եկեղեցւոյ  
Պինկ Համթըն.

Յարգելի Պրն. Պաղտասարեան,

Ինչպէս Ծեռաձայնի վրայ Զեզի Հաղորդած էինք, Հոգեշնորհ  
Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան պիտի այցելէ Զեր Համայնքին Նոյեմբերը  
25ին եւ Զեր Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագի Մատուցումմբ պիտի մինի-  
թարէ ժողովուրդը:

Հաճեցէք Զեր պատրաստութիւնները տեսնել ըստ այնմ եւ նը-  
շանակուած թուականէն առաջ յարաբերութեան մէջ մտնել Հայր Սուր-  
բին չետ:

Սաղթելով Զեզի առողջութիւն եւ յաջողութիւն.

Մնամ խորին յարգանօք

Սուրբն Մանուկէլեան  
Դիւանապետ

Թիւ 11178  
Ապրիլ 10, 1964

Մեծայարգ  
Տիար Սանուկ Պաղտասարեան  
Առենադպիր Պատուարժան Ծխական Խորհուրդի  
Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Դինկհամբըն.

Ցարքելի Պրն. Պաղտասարեան,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Ձեր Ապրիլ 7 թուակիր  
Նամակը, որով 2.500 տոլարի փոխառութիւն կը խնդրէք Առաջնորդա-  
րանէն, երկու կամ երեք տարիէն վճարելու պայմանաւ:

Նորին Սրբազնութիւնը եւ Պատուարժան Քեմական Խորհուրդը,  
Նկատի ունենալով Հանդերձ որ Ձեր Եկեղեցւոյ բարեզարդութեան Հա-  
մար անցեալ տարի կարեւոր գումար մը պարտք ըրած էք, ցաւ ի սիրո  
կը յայտնեն թէ կարելի չէ ընթացք տալ փոխառութեան Համար Ներկա-  
յացուցած Ձեր խնդրանքին, տրուած ըլլալով որ Առաջնորդարանի գան-  
ձին մէջ այդ ուղղութեամբ պիւտէ չկայ:

Արդ. Առաջնորդ Սրբազան Հօր յանձնարութիւնն է որ դուք  
ջանաք Ձեր տեղական միջոցներով Հայթայթել Վերոյիշեալ անհրաժեշտ  
գումարը:

Չայս Հաղպրդելով Պատուարժան Ծխական Խորհուրդիդ առ ի  
գիտութիւն եւ մաղթելով Եկեղեցանուեր Ձեր գործերուն կատարեալ  
յաջողութիւն.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունի  
Աղօթարար

Եղիշէ ՎՐԴ. ԿԻԶԻՐԵԱՆ  
Առաջնորդական Փոխանորդ

Թիւ 18038  
Ապրիլ 6, 1967

Հոգեշնարք

Տ. Պատիկ Արեգաց Ավետիքսիան

Հոգեւոր Հոգի Յ. Գրիգոր Լուսաւորչ Մինիստր

Եւ Նախառայի Սիմեոն Խարճարյան

Գրնդի համբարձունքներ

Սիրելի Հայր Պատիկ,

Նկատի ունենալով անհրաժեշտութիւնը Միացեալ Խախանաց մայրաքաղաքական և Առաջինկանութիւնի մէջ հոգեւոր Հովի մը ծւ ներկայացնեցի մոտ նշանակած առաջնորդ Առաջինկան հակաւելու համար Յ. Վահանականի նկատմամբ նկատեցույց համայնքը:

Կո յանձնաբառնց որ Մայիս 7, 1967 թուականը Նկատէց վճրշին Բուռական Դիմկանութիւնի մօք համայնք 26ր հոգուութեան եւ զատ այս կատարեած անհրաժեշտ հարցադրութիւնները նույնականացնելու համար պահանջական էի կարենաց մէկնիլ Առաջինկանի պյանել մօք առաջի պատրաստ մասնակությունը Մայիս 14, 1967ին:

Վասոց ենք թէ կարելի պիտի ըլլայ մասնաւոր կարգադրութիւն ընել որ Պահանջման մօք համայնքին ուղարկեալ հոգեւոր հորինեալը նույնական այցելու հարեւերուն, մինչեւ որ կարենանց մէջուն հոգեւոր Հովի մը ապօնանիլ:

Կո հաւաանք թէ Միան Խարճարյան, Ակեղեցու մէջ գործող Միան Կազմակերպութեանց Ըստ միանք առաջի եւ յանապէտ պիտի ըլլայ կաղամական պահութան մէջ պայմանացնելու համայնքին նույնական հարեւերուն կամացը:

Կո մասնիկ որ Առաջնորդ շնորհ անզակա մնայ համայնքի բարե անդամներուն քայլեն:

Արքայ պաշտոնի

ԹՈՐԱԾ ԵԳԻՒՅԻՆՈՒ  
Առաջնորդ

Թիւ 24094  
Յուլիս 17, 1978

Մեծայարգ  
Տիար Նուպար Ասթարծեան  
Ատենապետ ծիական Խորհուրդի  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ  
Պինկ համթըն, Ն. Ե.

Սիրելի Պր. Ասթարծեան,

Պինկ համթընի մեր համայնքին հոգեւոր մատակարար Ռէյմրնտ Սրկ.  
Առարելեան 1978 Յուլիս 7 թուակիր նամակով յայտնած էր մեզի իր  
պատրաստակամութիւնը ձեռնադրելու որպէս քահանայ Հայց. Առարելական  
Ուղղափառ Եկեղեցւոյ:

Թեմական Խորհուրդի նիստին մէջ դրական որոշում մը առնելու հա-  
մար անհրաժեշտ է ունենալ նաեւ ծիական Խորհուրդի վկառւթիւնը  
Ռէյմրնտ Սրկ. Առարելեանի մասին, զոր Տէրը եթէ կամի մտադիր ենք  
ձեռնադրել եւ հոգեւոր հովիւ նշանակել Պինկ համթընի մեր համայնքին:

Համեցեք Զեր նամակը մեզի հասցնել մինչեւ Օգոստոս 2, 1978:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՁԵԳԻՍԿՈԴՈՒ  
Առաջնորդ

Թիւ 24973  
Հոկտեմբեր 21, 1976

Արժանաշնորհ

Տ. Գևորգ Զբինյ. Առաքելեան  
Հովհան Ս. Պրիզոր Լուսաւորիչ Ակեղեցւոյ  
նախազան ծխական Խորհաւորդի  
Պինկ համբըն.

Միրելի Տէր Գևորգ,

Առաջած ենք Հոկտ. 14, 1976 թուակիր մեր նամակը: Պինկ համբըն պիտի  
մասնանք Ուրբաթ, Դեկտ. 8, 1976, կ.ս. ժամը 8.18ին՝ Ալբկենի օդանաւային  
ընկերութեան թիւ 461 թորիչով: Պիտի վերադառնաք Արկուշարքի, Դեկտ. 6,  
սակայն մեր թորիչի ժամը առկաւին անորոշ է, որովհեան նոյն օրը Երզակօ<sup>ւ</sup>  
երթալու հարց մը ունինք:

“Վերթին Ըսթրիք”՝ ի նկարին օծումը կրնանք կատարել Ա. Պա-  
տարագի մասուցումէն եարք: Նկարի օծման համար դպրաց դասը հետեւեալ երգե-  
րը եթէ սորզի, կրնանք օգտագործել: Հարս Հայ Պատկերի 92. շարական, որուն  
նօթան ապուած չունինց. ուստի Յարութեան մաշու 74. “Ար անբաւելի” շա-  
րականը թող սորզին, Աերթա Միւզիք Բ. հատոր էջ 129, նաև էջ 185 “Բանն  
որ ընդ Հօր”, “Ամէն Ալէլուիս” եւայլն:

Ուրբաթ Դեկտ. 8ի երեկոյեան կրնանք ժողով ունենալ Ակեղեցւոյդ ծխա-  
կան Խորհուրդին հետ, իսկ Եարբաթ, Արթակմածից արարողութենէն եարք, Ակեղեց-  
ւոյ այլ վարչութեանց եւ անդամներուն հետ:

Նոյեմբեր 18ին Թւարի մէջ աեղի պիտի ունենայ Երջանային ժողով մը,  
որուն պիտի մասնակցի նաև Պինկ համբընի ծուփը: Այս մասին պաշտօնապէս  
պիտի աեղեկացուի ձեզի:

Միրոյ ողջունիւ

ԹԱՐԳԱՌ ԱՐՁԵՎԻՍՆԱՐԴՈՒ  
Առաջնորդ

**Թիւ 25059**  
**Յունուար 13, 1977**

**Արժանաշնորհ**  
**Տ. Գէորգ Է Տնյ. Ալաբելիան**  
**Հովիտ Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ**  
**Պինկհամթըն.**

**Սիրութի Տէր Գէորգ,**

Նաացած Ենք Դսկամբեր 16, 1976 թուակիր ժեր Նամակը:  
Մայիս 22-ը վերապահած Ենք Պինկհամթընի մեր համայնքի այցելութեան: Մեր յամանումի մասին կը տեղիկացնենք ժեզի:

Նաացած Ենք Նաև Առաջնորդարանէն ժեր Եկեղեցւոյ ղըրկուած շրջաբնրականներուն եւ թղթակցութեանց նկարահանուած օրինակները, որոնք մնձապէս օգտակար պիտի հանդիսանան մեր արիիւները վերադասւորելու աշխատանքին:

Հեզի կը մաղթներ առաւել առողջութիւն եւ Եկեղեցանուէր ժեր զործութեան նոր յաջողութիւններ:

**Սիրոյ ողջունիւ**

**ԹՈՐԳՈՒՄ ԱՅԼ ԾՊԻՍԿԱՊՈԽ**  
**Առաջնորդ**

Թիւ 24973  
Հոկտեմբեր 21, 1976

Արժանաշնորհ

Տ. Գէորգ Էհնյ. Առաքելեան  
Հովհան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Նկեղեցւոյ  
Նախազան ծիական Խորհուրդի  
Պինկհամթըն.

Միրելի Տէր Գէորգ,

Ստացած ենք Հոկտ. 14, 1976 թուակիր ձեր նամակը: Պինկհամթըն պիտի  
ժամանենք Ալբանի, Դեկտ. 8, 1976, կ.ս. ժամը 8.18ին՝ Ալիկէնի օղանաւային  
ընկերութեան թիւ 461 թոիշքով: Պիտի վերադառնանք Երկուշաքթի, Դեկտ. 6,  
սակայն մեր թոիշքի ժամը տակաւին անորոշ է, որովհեան նոյն օրը Երգակօ  
երթալու հարց մը ունինք:

``Վերթին Ըսթրիի`` ի նկարին օծումը կրնանք կառարել Կիրակի Ա. Պա-  
տարագի մատուցումէն եաբ: Նկարի օծման համար դպրաց դասը հետնւեալ երգե-  
րը եթէ սորվի, կրնանք օգտագործել: Ձորս Ըստ Պատկերի 92. շարական, որուն  
նօթան տպուած չունինք. ուստի Ցարութեան ծաշու 74. ``Որ անքաւելի`` շա-  
րականը թող սորվին, Սէքրէտ Միւզիք Բ. հատոր էջ 129, նաեւ էջ 185 ``Բանն  
որ ընդ Զօր`` , ``Ամէն Ալէլուիա`` եւայլն:

Ալբանի Դեկտ. 8ի երեկոյեան կրնանք ժողով ունենալ Նկեղեցւոյդ ծիա-  
կան Խորհուրդին հետ, իսկ նաքանի, Կիրակմահից արարողութեանէն եաբ, Նկեղեց-  
ւոյ այլ վարչութեանց եւ անդամներուն հետ:

Նոյեմբեր 18ին Ռևարի մէջ տեղի պիտի ունենայ Երթանային ժողով մը,  
որուն պիտի մասնակցի նաեւ Պինկհամթընի ծուխը: Այս մասին պաշտօնապէս  
պիտի տեղեկացուի ձեզի:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՎ  
Առաջնորդ

Թիւ 25153  
Ժամանակ 24, 1977

Արժանաշնորհ

Տ. Գէորգ Էհնյ. Առաքել Եան  
Հոգիւ Ա. Զրիզոր Լուսաւորիչ Ակնեցւոյ  
Նախագահ Օբական Խորհուրդի  
Դինկ համբըն.

Սիրելի Ծէր Գէորգ,

Առաջած Ենք Ժամանակաշրջան 16, 1977 թուակիր ծեր անդեկազիրը, որով  
կը հաղորդէր թէ ծեր Նախագահութեամբ Յունուար 28ին գումարուած հա-  
մայնքիդ օբական ժողովին մէջ կատարուած է օբական Խորհուրդի երեք  
անդամոց ընտրութիւնը, եւ Ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝  
կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ծեր օբական ժողովը անգի ունեցած է Թեմա-  
կան Խանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերաց-  
նենք օբական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ առործւ արուած  
ցանկին:

Հաճեցէք ժութով Առաջնորդարեն դրկել օբական Խորհուրդի նորըն-  
տիր Դինենի անդամոց անունները:

Օրհնելով օբական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ծեզի եւ  
ծեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր զործունեութեան աս-  
րի մը, ի պայծառութիւն Ա. Ակնեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն  
համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիք

ԹՈՐՉՈՄ ԱՐՀԵՎԱԲԱԿՈՎԱՆ  
Առաջնորդ

Նշան Խաչոյեան  
Հէնրի Խաչառուրեան  
ծան Պաղասարեան

Մարտ 15, 1977

Արժանաշնորհ

Տ. Գեղրդ ՔԾՆՀ. Առաքել Եան  
Հովիտ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկ համթըլն.

Արժանաշնորհ Տէր Հայր,

Առաջնորդ Սրբազն Հայրը ստացած է Ներփակեալ յայտարարութիւնը Միջինքի առթիւ արուելիք նաշի կապակցութեամբ:

Սորին Սրբազնութիւնը ժեր ուշադրութեան կը ֆափաքի յանձնել թէ այս յայտարարութեան մէջ ոչ յիշուած են համայնքի Եկեղեցւոյ անունը եւ հաւաքոյթը կազմակերպող միութիւնը, եւ ոչ ալ յիշուած են վայրն ու հասցեն: Զգոյշ պէտք է ըլլալ նման պակասաւոր եւ ոչ ամրողջական տեղեկութիւններ պարունակող յայտարարութիւններ դրկելէ, անտեղի բննադատութեանց եւ մնկնաբանութեանց առաջքը առնելու համար:

Խորին յարգանօր

Խուպար Քիւփել Եան  
Քարառուղար

Թիւ 25824  
Յունիս 16, 1977

Արժանաշնորհ  
Տ. Գէորգ Քնյայ. Առաքելիսն  
Հովհան Մ. Գրիգոր Լուսաւորիչ Եկաղեցւոյ  
Պինկիամթըն.

Սիրելի Տէր Գէորգ,

Առացած սեբ Յունիս 10, 1977 թուակիր ժեր Նամակը, որով  
կը աեղեկացներ թէ ժեր արձակուրդը, Օգոստոս 18էն Անպահմբուր  
7, 1977, պիտի անցընել Գևլիթորնիոյ մէջ:

Զեզի քարի ճանապարհ եւ քարի արձակուրդ կը մաղթնեք:

Զեր երկրորդ Նամակին մէջ յիշած էիր պատկերասփեռի յայ-  
ապրի մասին: Ուրախ պիտի ըլլանք եթէ այդ յայտապրին ``Վիտիօ  
թէրքը`` ունենանք: Քարի նդեք հետաքրքրութիւն եւ մայմաններուն  
մասին մնայ աեղեկացնել:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՉՈՒ ԱՐԺԻԿԻՄՈՎՈՒ  
Առաջնորդ

Թիւ 25828  
Յունիս 16, 1977

Արժանաշնորհ  
Տ. Գէորգ Քինյ. Առաքելյան  
Հովհան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ակնդեցւոյ  
Խախազան օրական Խորհուրդի  
Գինկ համբըն.

Միրելի Տէր Գէորգ,

Ատացած ննր Յունիս 10, 1977 թուակիր մեր նամակը՝ որով  
Կը փափարիր ունենալ 1978 տարուան մեր այցելութեան թուականը:

Հեր համայնքին առլիք մեր այցելութեան յարմարազոյն թուա-  
կանը 1978 Յունիս 3-4ի շաբաթավերջն է:

Հանեցէք Նկատի ունենալ այս թուականը:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐՉՈՒՄ ԱՐՔԵՎԻՍԽՈՎՈՒՄ  
Առաջնորդ

Թիւ 25669  
Մարտ 9, 1978

Արժանաշնորհ

Տ. Լեւոն ՔԻՆՅ. Առաքելեան  
Հովհան Ս. Համբարձում Եկեղեցւոյ  
Նախազահ Օխական Խորհուրդի  
Պրինփորթ.

Սիրելի Տէր Լեւոն,

Այսօր ստացանք Փետրուար 24, 1978 թուակիր ծեր աեղեկագիրը, որով կը հա-  
ղորդէք թէ ծեր Նախազահութեամբ Յունուար 29ին գումարուած համայնքիղ ծխական  
Ժողովին մէջ կառարուած է ծխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ  
Ներկայացնելով քուէարկութեան արդիւթեք՝ կը խնդրէք ընտրուած անծերու վաւե-  
րացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ծեր օխական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնա-  
դրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք օխական Խորհուրդի  
Խորընակիր անդամները, ըստ սառըւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի Խորընակիր Դիւանի  
անդամոց անունները, հասցէնները եւ հեռաձայնի թիւերը:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ծեզի եւ ծեր պաշտօնա-  
կիցներու յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս.  
Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիղ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻԽԱԿՈՎՈՍ

Կարապետ Յովհաննէսեան  
Մարտիրոս Ազարեան  
Սթենլի Զիսը

Թիւ 25698  
Մարտ 22, 1978

Արժանաշնորհ

Տ. Գէորգ Քնյ. Առաքելեան  
Հովհան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Նախազահ ծխական Խորհուրդի  
Պինկ համթըն.

Սիրելի Տէր Գէորգ,

Ասացած ենք Մարտ 14, 1978 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք  
թէ ձեր նախազահութեամբ Յունուար 22ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կառարուած է ծխական Խորհուրդի շորս անդամոց ընտրութիւնը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ  
առորեւ արոււած ցանկին:

Հանեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի  
անդամոց անունները, հասցէնները եւ հեռաճայնի թիւերը:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն  
Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՅՈՒՄ ԱՐՁԵԳԻ ՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Էտուըրա Սերայարեան  
Ճորժ Ռէմէպեան  
Արթոր Գրանեան  
Գարըլ Պոկասարեան